ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋԱՋՈՒՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջաջուռ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ջաջուռ, հեռ. (0312) 6-00-16

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1-Ն

16 հունվարի 2017 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋԱՋՈՒՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 3-րդ և 5-րդ մասերի, « Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշեց.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջաջուռի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի «Ջաջուռ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 31-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.Համայնքի 2017 թվականի բյուջեյի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 10295.2 հազար դրամ, որից՝ վարչական մաս 1815.8 հազար դրամ, ֆոնդային մաս 8479.4 հազար դրամ: